ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Մարդիկ վաղուց գիտեին, որ օվկիանոսում ջուրը տեղաշարժվում է մեծ հեռավորությունների վրա: Օվկիանոսային հոսանքները հեռավոր կղզիներից բերում էին հրաբխային պեմզայի կտորներ, կորած կամ խորտակված նավերի բեկորներ, կոկոսներ, իսկ երբեմն էլ կնքված շշեր, որոնցում կային նավաբեկվածների նամակներ:

1850թ. Իսպանիայի ափերին պատահաբար հայտնաբերվել է Կոլումբոսի կողմից իսպանիայի թագուհուն ուղարկված հաղորդագրությունը: Այն ուղարկվել է 358 տարի առաջ Հայիթի կղզուց: Հաղորդագրությունը դրված էր կոկոսի կեղևի մեջ և տեղավորված ձյութապատ կաղնե տակառի մեջ, որն ժամանակի ընթացքում ծածկվել էր տիղմի հաստ շերտով: Որքա՞ն ժամանակում էր տակառը Ատլանտյան օվկիանոսով լողալով հասել Իսպանիայի ափերը՝ դժվար է պատկերացնել:

Շշերի մեծ մասը տարբեր պատճառներով անհետ կորչում են, եղել են դեպքեր երբ կիսաքայքայված շշեր հայտնաբերվել են խոշոր ձկների ստամոքսներում: Այնուամենայնիվ «շշերի փոստը» ծովայիններին օգնեց հավաքել կարևոր տեղեկություններ օվկիանոսի հոսանքների մասին: Այժմ ծովային հոսանքները ուսումնասիրվում են հատուկ սարքավորված հետազոտական նավերի, ինքնաթիռների և արբանյակային կայանների միջոցով: